

<< Նոր ժամանակի կրթություն >> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականների
իմացական կարողությունների զարգացման
առանձնահատկությունները

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝

Երևանի Ռ. Միրոյանի անվան հ.77 հիմնական դպրոց

Երևան 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
1. Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը.....	5
2. Կրտսեր դպրոցական իմացական գործընթացների զարգացումը.....	7
2.1.Ընկալում /ըմբռնում/.....	7
2.2. Հիշողություն	8
2.3. Ուշադրությունը	10
2.4.Երևակայություն	12
2.5. Մտածողություն և խոսք	13
Եզրակացություն.....	20
Օգտագործված գրականության ցանկ.....	21

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջան, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Ժամանակակից կրթության խնդիրները կայանում են ոչ միայն նրանում, որպեսզի ապահովեն աշակերտների կողմից ծրագրերի ընկալումը, այլև նրանում, որպեսզի առաջ տանեն նրանց մտքի զարգացումը: Երեխաների մտավոր զարգացման գործում հատուկ նշանակություն ունի աշխատանքը սկզբնական դասարաններում, որը հանդիսանում է աշակերտի՝ հետագայում որպես անհատականություն ձևավորվելու հիմքը:

Աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից դպրոցական համակարգում կրտսեր դպրոցականի իմացական գործընթացների զարգացումը խթանելու ուղղությամբ պետք է կարևորվի մանկավարժի աշխատանքների համարժեք կազմակերպումը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է բացահայտել կրտսեր դպրոցականի իմացական գործընթացների զարգացման առանձնահատկությունները:

Աշխատանքի հիմնական խնդիրները: Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսական հայեցակարգերը:

2. Զննարկել իմացական գործընթացները և դրանց զարգացման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում

Ջեռագոտության օբյեկտը: Կրտսեր դպրոցականի իմացական գործընթացի զարգացման առանձնահատկություններն են:

Ջեռագոտության առարկան: Իմացական գործընթացների դերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում:

Աշխատանքի մեթոդները: Աշխատանքի համար հիմք են ծառայել համապատասխան գրականության ուսումնասիրման, համեմատական վերլուծության, առաջավոր փորձի ուսումնասիրման ու ընդհանրացման մեթոդները:

1. Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը

Կրտսեր դպրոցական տարիքում զարգանում է երեխայի օրգանիզմը, շարունակում է կմախքի ոսկրացումը, հետագա զարգացում է ապրում մկանային համակարգը, ավելանում է ուղեղի քաշը (11-12 տ, հասնելով 1250 գրամի) և այլն:

Չանդրադառնալով կրտսեր դպրոցականի անատոմիական կառուցվածքի ու ներվա-մկանային սիստեմի զարգացման հարցերին, նշենք միայն, որ երեխայի ներվային սիստեմն ու հոգեկանը զարգանում են միասնաբար: Հոգեկան պրոցեսները զարգանում, որակական փոփոխություններ են կրում հատկապես բարձրագույն ներվային սիստեմի հետագա զարգացման բազայի վրա՝ սիստեմատիկ ուսուցման, կրթության, դաստիարակության ու սոցիալիստական միջավայրի ակտիվ ներգործման պայմաններում¹:

Կրտսեր դպրոցական տարիքից սկսած երեխայի կյանքում առաջատար գործունեությունը դառնում է ուսումնական աշխատանքը, որը կազմակերպվում է կամաձին ու նպատակասլաց ձևով՝ հասարակականորեն նշանակալից արդյունքի հասնելու համար ճիշտ է, դպրոց ընդունվելով, երեխան բնավ չի դադարում խաղալուց, երեխայի կյանքում «խաղը մնում է նորմա» (Մակարենկո), բայց խաղը՝ իբրև առաջնակարգ գործունեություն (որպիսին է նախադպրոցականի մոտ) իր տեղը աստիճանաբար զիջում է ուսումնական աշխատանքին Ըստ որում այս տարիքից սկսած փոխվում է խաղի բնույթը, «դպրոցական հասակում տեղի է ունենում խաղի և ուսման վերջնական ու լիակատար դիֆերենցացիան»:

Նկատենք սակայն, որ առաջին և երկրորդ դասարաններում երեխաներին դեռևս բավականություն են պատճառում սոսկ արտագրելու, հաշվելու, ընթերցելու կամ վարժություններ լուծելու պրոցեսները: Այնուհետև, նրանց մոտ աստիճանաբար հետաքրքրություն է առաջանում դեպի դասավանդվող առարկաները, բուն գիտելիքները²: Արդեն 3-4-րդ դասարանների երեխաները ընդհանուր հետաքրքրություն են ցուցաբերում դեպի գիտության հիմունքները, դեպի ուսումնական առարկաները, ձգտելով շատ բան սովորել: Այսինքն կրտսեր դպրոցականները սկսում են գիտակցել, որ սովորելը, ուսումը իրենց առաջին պարտականությունն է:

Կրտսեր դպրոցականի ըմբռնումն ու մտածողությունը կոնկրետ են, կերպարային-առարկայական, անմիջական Ուշինսկու այն դրույթը, թե «երեխան մտածում է գույներով, հնչյուններով, առարկայական ձևերով» վերաբերում է նաև կրտսեր

¹ Немов Р.С., Психология. Т.2. М. 2007г. էջ 89:

² Немов Р.С., Психология, Т.1., М. 2007г. էջ 95:

դպրոցական փուլին: Հոգեբանական նաև այդ առանձնահատկությունը հաշվի առնելով տարրական դասարաններում մեծ տեղ է տրվում դիտողական ուսուցմանը, դա «...այնպիսի ուսուցում է, որը կառուցվում է ոչ թե վերացական բառերի ու պատկերացումների վրա, այլ երեխայի կողմից անմիջականորեն ընկալած կոնկրետ մտապատկերների վրա» :

Կրտսեր դպրոցականի մտածողական պրոցեսները՝ անալիզ, սինթեզ, արատրակցիա, ընդհանրացում, դեռևս թույլ են: Դրանք տեղի են ունենում մտապատկերների նեղ շրջանակներում հոգեբանների հետազոտությունների հիման վրա կարելի է մատնանշել կրտսեր դպրոցականի մտածողության այն մի քանի առանձնահատկությունները, որոնք արդեն նկատվում են ուսումնասիրվող փուլի կամ տարրական ուսուցման վերջում³:

1. Երեխան յուրացնում է նոր բովանդակության հիման վրա առավել վերացական հասկացություններ, որոնք կապված են կոնկրետ երևույթների հետ միջնորդավորված ձևով, և այլ հասկացությունների միջոցով. այսինքն՝ նրա մոտ ձևավորվում են ստորադասակցված հասկացություններ:

2. Մտքի ընթացքը որոշվում է հասկացությունների միջև եղած կապերով և տեղի է ունենում մեկ հասկացությունից դեպի մյուս հասկացությունը տրամաբանական կանոններով:

3. Սակայն հասկացությունների կապերը և տրամաբանական գործողությունները դեռևս երեխան բավականին պարզությամբ չի գիտակցում. ուստի միտքը, մտածողությունը դեռևս թույլ է վերահսկվում իր իսկ երեխայի կողմից⁴:

Մանկավարժական հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «յոթ տարեկան հասակի մոտերքին երեխաների մեծամասնության մոտ արդեն ձևավորվում են հոգեբանական այն առանձնահատկությունները, որոնք որոշում են նրանց ընդհանուր պատրաստակալությունը դպրոցական ուսուցման համար»: Ավագ նախադպրոցականներին արդեն հետաքրքրում են ոչ միայն դպրոցի և դպրոցականի հետ կապված արտաքին հանգամանքներ (զանգի ղողանջ, դպրոցականի կեցվածք, գրքերի պայուսակ, պիոներական սիմվոլիկա և այլն), այլև դպրոցական ուսուցումը:

Դպրոց ընդունվելու համար նախադպրոցականի «երազանքները» իրականանում են յոթ տարեկանում Ֆիզիկականի, հոգեկան պրոցեսների հետագա զարգացման ու անձնավորության ձևավորման համար երեխայի կյանքում դպրոց ընդունվելը հանդիսանում է շրջադարձային մոմենտ: Գործունեության նոր պայմաններում դպրոցը,

³ Немов Р.С., Психология, Т.1., М. 2007г. էջ 96:

⁴ Պետրովսկի Ա.Վ., Ընդհանուր հոգեբանություն, Երևան, 1974թ., էջ 214:

ընտանիքը, մանկական կոլեկտիվը երեխաներին առաջադրում են պահանջներ ու նպատակներ, որոնց կատարման համար պահանջվում է մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացման համեմատաբար բարձր մակարդակ, քան ուներ երեխան նախադպրոցական տարիքում:

2. Կրտսեր դպրոցական իմացական գործընթացների զարգացումը

Կրտսեր դպրոցականի մտավոր զարգացումը և ինտելեկտուալ դրսևորումները պայմանավորված են մի շարք գործառույթներով, որոնք ընդհանրացվում են իմացական գործընթացներով՝ հիշողություն, ուշադրություն, ընկալում, մաթեմատիկական ունակություններ, մտածողություն և ստեղծարարություն: Այս ամենն ապահովում է արտաքին աշխարհի ճանաչումը: Սոցիալական տարբեր իրավիճակներում երեխան ցուցաբերում է տարբեր հույզեր, որոնց դրսևորումները արտացոլվում են նրա միջանձնային հարաբերություններում և ինքնագնահատման մեջ:⁵

2.1. Ընկալում /ըմբռնում/

Կրտսեր դպրոցականը ունի ընկալման զարգացման բավականին մակարդակ՝ նա ունի բարձր մակարդակի սուր տեսողություն, լսողություն, առարկաների ձևի և գույների նկատմամբ կողմնորոշում: Ուուցման գործընթացը հարուցում է նոր պահանջներ նրա ընկալման համար: Կրթական ինֆրոմացիայի ընկալման գործընթացում անհրաժեշտ է մասնակիցների գործունեության կամայականություն և իմաստավորում, նրանք ընկալում են տարբեր կերպարներ, որոնց համապատասխան էլ պետք է գործեն: Գործողության կամայականությունը և իմաստավորումը սերտ փոխկապված է և զարգանում են միաժամանակ: Սկզբից երեխային գրավում է առարկան, և առաջին հերթին նրա արտաքին վառ նշանները: Կենտրոնանալը և մանրակրկիտ ուսումնասիրել բոլոր յուրահատկությունները առարկայի և առանձնացնել նրանում գլխավորը, էականորեն երեխաները չեն կարող: Այդ յուրահատկությունը արտահայտվում է և ուսումնական գործունեության գործընթացում: Սովորելով մաթեմատիկա, աշակերտները չեն կարող վերլուծել և ճիշտ ընկալել 6 և 9 թվերը, այբուբենի «Է» և «ե» տառերը:⁶

⁵ Տես Բալյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր» - Երևան: Լույս, 1983թ., էջ 52:

⁶ Տես Зимняя И.А. Педагогическая психология. Учебник для вузов. Издание второе, дополненное и переработанное. – М.: Издательская корпорация Логос, 1999. էջ 29:

Մանկավարժի աշխատանքը պետք է անընդհատ ուղղված լինի աշակերտներին սովորեցնել վերլուծության, առարկաների հատկությունները համեմատելու, էականը առանձնացնել և այդ բառը ճիշտ արտասանել: Անհրաժեշտ է սովորեցնել կենտրոնացնել ուշադրությունը ուսումնական գործունեության առարկաների նկատմամբ անկախ արտաքին գրավչությունից: Այս ամենը բերում է կամայականության, իմաստավորման զարգացմանը իսկ դրա հետ միասին ընկալման այլ ընտրության: Արդեն առաջին դասարանն ավարտելուց աշակերտը կարողանում է ընկալել առարկաները համապատասխանաբար իր պահանջմունքերի և հետաքրքրությունների, որոնք ծագում են ուսուցման գործընթացում և իրենց անցյալում ձեռք բերված փորձով: Ուսուցիչը շարունակում է սովորեցնել ընկալման տեխնիկային, ցույց է տալիս դիտման և լսումների ձևերը, դրանց բնութագրերի բացահայտումը:

Այս բոլորը խթանում է ընկալման հետագա զարգացումը, ի հայտ է գալիս դիտարկումը որպես հատուկ գործունեություն, զարգանում է դիտարկումը որպես բնավորության գիծ:⁷

2.2. Հիշողություն

Կրտսեր աշակերտի հիշողությունը ուսումնա-իմացական գործունեության առաջնային հոգեբանական բաղադրիչն է: Բացի դրանից, հիշողությունը կարող է դիտարկվել որպես ինքնուրույն մեմոնիկ գործունեություն, որն ուղղված է հատուկ հիշողության համար: Դպրոցում աշակերտները սիստեմատիկ հիշում են մեծ ծավալի նյութեր, իսկ հետո այն վերարտադրում են:

Կրտսեր դպրոցականը հեշտ է հիշում այն, ինչը առավել վառ, անսովոր է, որն արտահայտում է էմոցիոնալ տպավորություն: Բայց դպրոցական կյանքն այնպիսին է, որ առաջին իսկ օրերից երեխայից պահանջում է նյութի կամայական հիշողություն: Դա և օրվա ռեժիմն է, և տնային աշխատանքները, և կարգ ու կանոնը, որն անցնում են դասի ժամանակ: Չտիրապետելով մեմոնիկ գործունեությանը, աշակերտը ձգտում է մեխանիկական հիշողության, որը ընդհանարպես չի հանդիսանում նրա հիշողության բնութագրական հատկությունը և առաջացնում է հսկայական դժվարություններ:

Այս թերությունը վերացվում է այն դեպքում, եթե ուսուցիչը սովորեցնում է աշակերտին հիշողության ռացիոնալ ձևերին: Ուսումնասիրողները առանձնացնում են երկու ուղղություն՝ մեկը իմաստային հիշողության ձևերի կազմավորում /իմաստային

⁷Stu Гинзбург М.Р. Развитие мотивов учения у детей 6-7 лет. Особенности психического развития детей 6-7 летнего возраста // [ред. Д.Б. Эльконин]. - М., 2007. - էջ 184:

մավորների տարանջատում, իմաստային խմբավորում, իմաստային հակադրումներ/ և մյուսը՝ վերարտադրման ձևերի կազմավորում, որը բաժանված է ժամանակի մեջ, ինչպես նաև ինքնակառավարման ձևեր հիշողության արդյունքների համար:

Կրտսեր դպրոցականի մենմոնիկ գործունեությունը ինչպես և նրա ուսուցումը ամբողջությամբ, դառնում է առավել կամայական և իմաստային: Հիշողության իմաստավորման ցուցանիշը և հանդիսանում է աշակերտի հնարքների, հիշողության միջոցների տիրապետումը: Հիշողության կարևոր ձևը՝ դա տեքստի բաժանումն է իմաստային մասերի, պլանի կազմումը: Բազմաթիվ հոգեբանական ուսումնասիրություններում ընդգծվում է, որ առաջին և երկրորդ դասարանի աշակերտների հիշողության ժամանակ դժվարանում են բաժանել տեքստը իմաստային բաժանումների, նրանք չեն կարողանում առանձնացնել էականը և գլխավորը յուրաքանչյուր հատվածում, իսկ եթե անգամ բաժանում են, ապա միայն մեխանիկորեն բաժանում են հիշվող նյութը առավել հեշտ սովորելու նպատակով: Առավել դժվար է նրանց համար բաժանել տեքստը հիշողության համար իմաստային մասերի, և նրանք դա անում են ավելի լավ, միայն երբ անմիջականորեն ընկալում են տեքստը: Դրա համար առաջին դասարանից տեքստերի բաժանման աշխատանքը պետք է սկսի այն պահից, երբ երեխաները բանավոր ձևով փոխանցում են նկարի, պատմության բովանդակությունը: Պլանի կազմումը թույլ է տալիս նրանց գիտակցել ուսումնական նյութի հետևողականությունը և փոխադարձ կապը, հիշե լայր տրամաբանական հետևողականությունը և համապատասխանաբար վերարտադրել:⁸

Սկզբնական դասարաններում կիրառվում են և ուրիշ միջոցներ, որոնք հեշտացնում են հիշողությունը, համեմատությունն ու հարաբերակցությունը: Հարաբերակցվում են սովորաբար այն, ինչը հիշվում է, ինչին արդեն լավ ծանոթ են, իսկ համեմատվում են առանձին մասերը, հիշվող նյութի ներքին հարցերը: Սկզբից այս միջոցները կիրառվում են մասնակիցների կողմից անմիջական հիշողության գործընթացում հաշվի առնելով արտաքին օժանդակող միջոցները /առարկաներ, նկարներ/, իսկ հետո ներքինները / հին և նոր նյութի միջև նմանեցում, պլանի կազմում և այլն/: Պետք է նաև նշել, որ առանց հատուկ ուսուցման Կրտսեր դպրոցականը չի կարող կիրառել ուսուցման ռացիոնալ ձևերը, քանի որ դրանք բոլորը պահանջում են բարդ մտային գործողությունների կիրառում /վերլուծություն, սինթեզ, համեմատություն/, որոնց նա աստիճանաբար տիրապետում է ուսուցման ընթացքում:

⁸ Сѣу Пастушкова М.А. Формирование познавательных интересов младших школьников в учебной деятельности : автореф. дис. ... канд. пед. наук / М.А. Пастушкова. - М., 2009. էջ 17:

Կրտսեր դպրոցականների կողմից վերարտադրման ձևերի տիրապետումը բնութագրվում է իրենց առանձնահատկություններով:

Վերարտադրությունը՝ կրտսեր դպրոցականի համար դժվար գործունեություն է, որը պահանջում է նկատակի որոշում, մտածողության գործընթացի ընդգրկում, ինքնակառավարում: Ուսուցման սկզբում երեխաների ինքնակառավարումը շատ թույլ է զարգացած և նրա կատարելագործումը անցնում է մի քանի փուլ: Սկզբից աշակերտը կարող է միայն բազմիցս կրկնել նյութը սովորելու ժամանակ, հետո նա փորձում է կառավարել ինքն իրեն, նայելով դասագրքին, այսինքն օգտագործելով ճանաչումը, հետո ուսուցման ընթացքում ձևավորվում է վերարտադրման պահանջմունք: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդպիսի պահանջմունքը ծագում է առաջին հերթին բանաստեղծություններ սովորելու ժամանակ, իսկ երրորդ դասարանում զարգանում է աշակերտի մտածողական գործունեության ցանկացած ուսուցման և կատարելագործման ժամանակ ինքնակառավարման պահանջմունքը, ուսումնական նյութը մշակվում է մտածողության գործընթացի ժամանակ, որը թույլ է տալիս հետագայում Կրտսեր դպրոցականներին առավել կապված վերարտադրել վերջինիս բովանդակությունը:

Հիշողության գործընթացում և մասնավորապես վերարտադրման գործընթացում ինտենսիվ զարգանում է կամայական հիշողությունը, և երկրորդից երրորդ դասարաններում նրա արդյունավետությունը երեխաների մոտ, համեմատած ոչ կամայականի հետ, կտրուկ աճում է: Սակայն մի շարք հոգեբանական ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ հետագայում հիշողության երկու ձևերն էլ զարգանում են միասին և փոխկապակցված: Դա բացատրվում է նրանով, որ կամային հիշողության զարգացումը և համապատասխանաբար ունակությունը կիրառել դրանց ձևերը օգնում է հետագայում վերլուծել ուսումնական նյութի բովանդակությունը և դրա լավագույնս հիշելու կարողությունը: Ինչպես նշվեց վերևում, հիշողության գործընթացները բնութագրվում են տարիքային առանձնահատկություններով, որոնց իմացությունն ու հաշվի առնումը անհրաժեշտ է ուսուցչին հաջող ուսուցման կազմակերպման համար և դպրոցականների մտավոր զարգացվածության համար:⁹

2.3. Ուշադրությունը

⁹ Տե՛ս Савченко А.Я. Развитие познавательной самостоятельности младших школьников Киев: Рад. шк., 1982. էջ 176:

Գիտելիքներ, հմտություններ և ունակություններ ստանալու գործընթացը պահանջում է երեխաների անընդհատ և արդյունավետ ինքնակառավարում, որը հնարավոր է միայն բավականին բարձր մակարդակի կամայական ուշադրության ձևավորման ժամանակ: Ինչպես հայտնի է, նախադպրոցական երեխայի մոտ գերիշխում է ոչ կամային ուշադրությունը, այն ուսուցման սկզբնական շրջանում գերիշխում է նաև Կրտսեր դպրոցականների մոտ: Ահա դրա համար է կամային ուշադրության զարգացումը դառնում է դպրոցականների հետագա հաջող ուսումնական գործունեության պայման և հետևաբար և ուսուցչի համար առաջնահերթ կարևորության խնդիր¹⁰:

Ուսուցման սկզբնական շրջանում ինչպես նաև հետագայում, աշակերտի ուշադրությունը գրավում է միայն առարկաների արտաքին կողմը: Արտաքին տպավորությունները գրավում են մասնակիցներին: Սակայն դա խանգարում է նրանց ներթափանցել նյութերի էության մեջ /իրադարձություններ, երևույթներ/, դժվարացնում է նաև վերահսկողությունը իրենց գործունեության նկատմամբ: Եթե ուսուցիչը անընդհատ հոգ է տանում Կրտսեր դպրոցականների կամային ուշադրության զարգացման ղեկավարման մասին, ապա նրանց ուսուցման ընթացքում սկզբնական դասարաններում այն ձևավորվում է շատ ինտենսիվ: Դրան նպաստում են երեխայի գործողությունների հստակ կազմակերպումը օրինակների օգտագործմամբ, ինչպես նաև այնպիսի գործողությունների, որոնցով նա կարող է ղեկավարել ինքնուրույն և միաժամանակ անընդհատ ինքն իրեն կառավարել: Նման գործողությունների տեսքով կարող հանդես գալ հատուկ կազմակերպված ստուգումները: Այսպիսով՝ աստիճանաբար Կրտսեր դպրոցականը սովորում է ինքնուրույն ղեկավարվել իր առջև դրված նպատակները, այսինքն՝ կամային ուշադրությունը դառնում է նրա մոտ առաջատար: Չարգացող կամային ուշադրությունը ազդում է և ուշադրության այլ ձևերի վրա, որոնք նույնպես դեռ շատ անկատար են ուսուցման առաջին տարիներին:

Այսպիսով՝ Կրտսեր դպրոցականի ուշադրության ծավալը ավելի քիչ է քան հասուն մադկանցը, առավել քիչ է զարգացած նրա մոտ և ուշադրությունը բաշխելու ունակությունը: Առավել վառ է արտահայտված ուշադրության բաշխման անկարողությունը թելադրություններ գրելու ժամանակ, երբ պետք է միաժամանակ լսել, հիշել կանոնները, ընկալել դրանք և գրել: Բայց արդեն երկրորդ դասարանում երեխաների մոտ նկատվում է զգալի առաջընթաց այդ հատկության կատարելագործման մեջ, եթե ուսուցիչը այնպես է կազմակերպում աշակերտների

¹⁰ Թութունջյան Ի.Մ «Կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունները» Երևան 1962թ. , էջ 187:

ուսուցողական աշխատանքները տանը, դասերի ժամանակ և նրանց հասարակական գործերում, որպեսզի նրանք սովորեն վերահսկել իրենց գործունեությունը և միաժամանակ հետևել մի քանի գործողությունների կատարումը:¹¹

Ուսուցման սկզբնական շրջանում ի հայտ են գալիս նաև մեծ քանակությամբ ուշադրության անկայունություն: Չարգացելով ուշադրության կայունությունը Կրտսեր դպրոցականների մոտ, ուսուցիչը պետք է հիշի, որ առաջին և երկրորդ դասարաններում ուշադրության կայունությունը բարձր է նրանց արտաքին գործողությունների կատարման ժամանակ, և ցածր է մտավոր գործողությունների կատարման ժամանակ: Դրա համար են մեթոդիստներն առաջարկում մտային պարապմունքներն ընդմիջել նկարներ, սխեմաներ և գծագրեր կազմելու պարապմունքներով: Կամային ուշադրության զարգացման հետ միասին զարգանում է նաև ոչ կամային ուշադրությունը, որը կապված է արդեն ոչ թե առարկայի վառ և արտաքին գրավչությամբ, այլ երեխայի պահանջմունքներով և հետաքրքրությամբ, որոնք ծագում են ուսումնական գործունեության ընթացքում, այսինքն նրանց անհատականության զարգացման հետ, երբ զգացմունքները, շահերը, մոտիվները և պահանջմունքները անընդհատ որոշում են նրանց ուշադրության ուղղությունը: Այսպիսով՝ մասնակիցների ուշադրության զարգացումը կապված է նրանց կողմից ուսումնական գործունեության տիրապետման և նրան անհատականության զարգացման հետ:¹²

2.4.Երևակայություն

Աշակերտը ուսումնական գործունեության ընթացքում ստանում է շատ նկարագրական տեղեկություններ, և դա պահանջում է նրանից անընդհատ կերպարների վերաստեղծում, առանց որի անհնար է հիշել ուսումնական նյութը և յուրացնել այն, այսինքն Կրտսեր դպրոցականի վերաստեղծված երևակայությունը ուսման սկզբից ընդգրկված է նպատակաուղղված գործունեությանը, որը նպաստում է նրա հոգեբանական զարգացմանը:

Կրտսեր դպրոցականների երևակայության զարգացման համար մեծ նշանակություն ունի նրանց պատկերացումները: Դրա համար կարևոր է ուսուցչի մեծ

¹¹ Стю Зимняя И.А. Педагогическая психология. Учебник для вузов. Издание второе, дополненное и переработанное. – М.: Издательская корпорация Логос, 1999г. էջ 69:

¹² Стю Пастушкова М.А. Формирование познавательных интересов младших школьников в учебной деятельности : автореф. дис. ... канд. пед. наук / М.А. Пастушкова. М., 2009г. էջ 24:

աշատանքը դասերի ժամանակ երեխաների թեմատիկ պատկերացումների համակարգի կուտակմանը: Այս ուղղությամբ մանկավարժի անընդհատ ջանքերի արդյունքում Կրտսեր դպրոցականի երևակայության զարգացման ժամանակ կատարվում են փոփոխություններ՝ սկզբից երեխաների մոտ երևակայական կերպարները անորոշ են, պարզ չեն, իսկ հետո դրանք դառնում են մի քանի տեսակի, ընդ որում նրանց մեջ գերակշռում են ոչ էականները, իսկ երկրորդ և երրորդ դասարաններում արտահայտված նշանները նշանակելիորեն մեծանում են, ընդ որում նրանց մեջ գերակշռում են էականները: Երեխայի մոտ ինքն իր մտավոր գործունեությունը կառավարելու ունակության զարգացման հետ միաժամանակ երևակայությունը դառնում է առավել կառավարելի գործընթաց, և նրա կերպարները ծագում են ինդիքների շրջանակում, որոնք նրանց առջև դնում են ուսումնական գործունեության բովանդակությունը:

Վերը նշված բոլոր առանձնահատկությունները հիմք են ստեղծում ստեղծագործական երևակայության գործընթացի զարգացման համար, որտեղ մեծ դեր է խաղում աշակերտի հատուկ ունակությունները: Այդ ունակությունները հիմք են հանդիսանում ստեղծագործական երևակայության և ստեղծագործական գործընթացի զարգացման համար:

2.5. Մտածողություն և խոսք

Կրտսեր դպրոցական տարիքում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը խթանում է վերացական մտածողության զարգացումը, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցնում է մտավոր պլանում գործողությունների կատարմանը: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է գործառույթային հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները:¹³

Մանկավարժների կողմից կատարված բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ երեխան, որը չի սովորում սովորել և չի տիրապետում մտածողության գործունեության օրինակներին տարրական դասարաններում, միջին դասարաններում

¹³ Стц Эльконин Д.Б. “Избранные психологические труды. Проблемы возрастной и педагогической психологии” П.ред. Д.И. Фельдштейна - М: Международная педагогическая академия, 1995 г. Стр 137:

սովորաբար դասվում է թույլերի շարքում: Այս խնդրի լուծման կարևոր ուղղություններից է հանդիսանում տարրական դասարաններում այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք կապահովեն երեխաների լիարժեք մտավոր զարգացումը, կապված ճանաչողական գործունեության հետաքրքրությունների, ունակությունների և հմտությունների ձևավորման, մտքի որակի, ստեղծագործական նախաձեռնությունների հետ:¹⁴ Սակայն, այդպիսի պայմանները տարրական ուսուցման ժամանակ ապահովվում են ոչ լրիվ չափով, քանի որ պրակտիկայում դեռ տարածված դասավադման ձև է հանդիսանում մանկավարժների կողմից կազմակերպված դասավանդման օրինակելի գործողությունները, իսկ որպես լրացուցիչ գործունեություն հաճախ մանկավարժները առաջարկում են երեխաներին մարզումների տեսքով վարժությունների կատարումը, որոնք հիմնված են նմանակման վրա, որոնք չեն պահանջում մտածողություն:

Այսպիսի պայմաններում ոչ բավարար չափով են զարգանում մտածողության /տրամաբանության/ այնպիսի որակներ, ինչպիսին է մտքի խորությունը, քննադատությունը, նրբությունը, որոնք հանդիսանում են երեխաների մտածողական ինքնուրույնության կողմնորոշիչները: Մտածողության /տրամաբանության/ ինքնուրույնության զարգացումը դա հենց դպրոցական ուսուցման հիմնական խնդիրն է: Սակայն, այդպիսի պայմանները տարրական ուսուցման ժամանակ ապահովվում են ոչ լրիվ չափով, քանի որ պրակտիկայում դեռ տարածված դասավադման ձև է հանդիսանում մանկավարժների կողմից կազմակերպված դասավանդման օրինակելի գործողությունները, իսկ որպես լրացուցիչ գործունեություն հաճախ մանկավարժները առաջարկում են երեխաներին մարզումների տեսքով վարժությունների կատարումը, որոնք հիմնված են նմանակման վրա, որոնք չեն պահանջում մտածողություն:

Կրտսեր դպրոցականների մտածողությունը էականորեն տարբերվում է նախադպրոցական տարիքի երեխաների մտածողությունից: Այսպես, եթե նախադպրոցականի մտածողության համար բնութագրական է այնպիսի որակներ, ինչպիսին ակամայությունը, քիչ կառավարելիությունը, իսկ մտածողական խնդիրների կառուցման և դրանց լուծման հիմքում, նրանք հաճախ և հեշտությամբ են մտածում նրանց մասին, ինչն իրենց հետաքրքիր է և ինչն իրենց գրավում է, ապա կրտսեր դպրոցականները ուսուցման արդյունքում, երբ անհրաժեշտ է պարբերաբար կատարել դասերը պարտադիր կարգով, սովորում է կառավարել իր մտածողությունը, մտածել այն ժամանակ, երբ անհրաժեշտ է:¹⁵

¹⁴ Стю Обухова Л.Ф., “Детская психология: теория, факты, проблемы, - М: Тривола, 1995г. էջ 39:

¹⁵ Стю Л.Ф. Обухова “Детская психология: теория, факты, проблемы, - М: Тривола, 1995г. էջ 93-97:

Շատ դեպքերում այդպիսի կամայական կառավարվող մտածողության ձևավորմանը նպաստում է մանկավարժի ցուցումները դասի ժամանակ, որը երեխաների մոտ արթնացնում է դատողությունը: Տարրական դասարաններում շփման ժամանակ երեխաների մոտ ձևավորվում է գիտակցված կրիտիկական մտածողություն:¹⁶

Դա տեղի է ունենում այն պատճառով, որ դասարանում քննարկվում են խնդրի լուծման ճանապարհները, դիտարկվում են լուծման տարբեր եղանակները, մանկավարժն անընդհատ պահանջում է դպրոցականից հիմնավորել, պատմել, ապացուցել իր դատողության ճշմարտացիությունը, այսինքն պահանջում է երեխաներից, որպեսզի նրանք խնդիրները լուծեն ինքնուրույն:

Իրենց գործողությունները պլանավորելու իմացությունը նույնպես ակտիվորեն ձևավորվում է կրտսեր դպրոցականների մոտ դպրոցական ուսուցման ընթացքում, ուսուցումը երեխաներին ստիպում է սկզբում հետևել խնդրի լուծման պլանին, և միայն հետո անցնել նրա պրակտիկ լուծմանը: Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը պարբերաբար և պարտադիր կարգով դառնում է սիստեմատիկ, երբ նրան պետք է դատել, համեմատել տարբեր կարծիքներ, կատարել եզրահանգումներ: Դրա համար կրտսեր դպրոցական տարիքում սկսում է ինտենսիվ զարգանալ և նախադպրոցական տարիքի երեխաների մտածողության երրորդ ձևը՝ բառատրամաբանականը, առանձնացված մտածողություն, որը տարբերվում է դիտագործնականից և դիտակերպարայինից:

Տարրական դասարաններում դասերի ընթացքում ուսումնական խնդիրների լուծման ժամանակ երեխաների մոտ ձևավորվում է տրամաբանական մտածողության այնպիսի ձևեր, ինչպիսին է համեմատությունը, որը կապված է բաշխման և բառային նշանակության հետ տարբեր հատկությունների և ընդհանրացման նախանշանների հետ, կապված առարկայի գոյություն չունեցող նախանշանների տարբերության և նրանց միավորման հետ նրանց էական առանձնահատկությունների ընդհանրության հիման վրա:¹⁷

Դպրոցի ուսուցման շրջանակներում երեխաների մտածողությունը դառնում է առավել ազատ, առավել ծրագրավորված, առավել գիտակցված, առավել պլանավորված, այսինքն այն դառնում է բառատրամաբանական:

¹⁶ Տե՛ս Կուպարաձե, Կ. Педагогические условия развития умений критически мыслить у учащихся начальных классов [Текст] / К. Купарадзе // Нач. шк. – 2004г. - №8, էջ 78:

¹⁷ Տե՛ս Ջալձակ, Կ.Կ. Развитие логичности мышления у младших школьников [Текст] / К.К. Жалдак // Нач. шк. - 2000. - №7:

Իհարկե, մտածողության այլ ձևեր էլ են զարգանում այդ տարիքում բայց հիմնական ուղղությունը ընկնում է դատողության և եզրահանգումների հնարքների ձևավորման վրա: Մանկավարժները գիտեն, որ նույն տարիքի երեխաների մոտ մտածողությունը բավականին տարբեր է, երեխաների որոշ մասը հեշտությամբ լուծում է պրակտիկ բնույթի խնդիրներ, երբ պահանջվում է կիրառել մտածողության դիտագործնական հանրքները: Մյուս մասին հեշտությամբ է տրվում առաջադրանքների լուծումը, որոնք կարիք ունեն երևակայության և պատկերացնել որևէ իրավիճակ կամ երևույթ, երրորդ տեսակը հեշտությամբ տրամաբանում է, կառուցում են դատողություններ ու եզրահանգումներ, որը թույլ է տալիս նրանց առավել արդյունավետ լուծելու մաթեմատիկական խնդիրներ, եզրահանգել ընդհանուր կանոնները և օգտագործել դրանք հստակ իրավիճակներում:¹⁸

Եվ վերջապես, եթե երեխան հաջողությամբ լուծում է և հեշտ և բարդ խնդիրներ, համապատասխան մտածողության ձևի շրջանակներում և նույնիսկ կարող է օգնել մյուս երեխաներին լուծելու հեշտ խնդիրներ, բացատրել նրանց թույլ տված սխալները, ինչպես նաև կարող է ինքնուրույն հորինել հեշտ խնդիրներ, նրա մոտ առակ է համապատասխան մտածողության ձևի երրորդ մակարդակի զարգացման մտածողություն:¹⁹

Երեխայի այս կամ այն ձևի մտածողության առկայության դեպքում կարելի է դատել նրանով, թե ոնց է նա լուծում տվյալ տեսակին համապատասխան խնդիրները, այսպես, եթե հեշտ խնդիրների լուծման ժամանակ առարկաների պրակտիկ վերարտադրման միջոցով, կամ դրանց կերպարների փոփոխության միջոցով, կամ էլ տրամաբանության հիման վրա երեխան վատ է կողմնորոշվում նրանց պայմաններին, կորցնում կամ խառնվում է դրանց լուծման ժամանակ, ապա այս դեպքում համարվում է, որ տվյալ դպրոցականի մոտ մտածողության համապատասխան ձևի զարգացման առաջին մակարդակն է:

Եթե կրտսեր դպրոցականը հաջողությամբ լուծում է հեշտ խնդիրները, որոնք նախատեսված են այս կամ այն ձևի մտածողությանը, բայց դժվարանում է առավել դժվար խնդիրների լուծման ժամանակ, մասնավորապես այն պատճառով, որ չի հաջողվում երեխային պատկերացնել այդ խնդրի լուծումը ամբողջությամբ,, քանի որ բավական զարգացած չէ նրա մոտ պլանավորման ունակությունը, ապա այս դեպքում

¹⁸ Տե՛ս «Практическая психология образования» под ред. Дубровиной И., М., ТЦ «Сфера», 1997 էջ 59:

¹⁹ Տե՛ս Жалдак, Н.Н. Развитие логичности мышления у младших школьников [Текст] / Н.Н. Жалдак // Нач. шк. – 2000г. - №7. С. 77-82:

համարվում է, որ տվյալ երեխայի մոտ առկա է համապատասխան մտածողության ձևի զարգացման երկրորդ մակարդակը:²⁰

Կրտսեր դպրոցականի մտավոր զարգացման համար անհրաժեշտ է կիրառել երեք ձևի մտածողություն: Դրա հետ միասին, դրանցից յուրաքանչյուրի օգնությամբ երեխայի մոտ ավելի լավ է ձևավորվում մտքի այս կամ այն որակները:

Այսպես՝ խնդիրների լուծումը դիտագործնական մտածողության միջոցով թույլ է տալիս կրտսեր դպրոցականների մոտ զարգացնել իրենց գործողությունների կառավարման հմտությունները, խնդիրների լուծման նպատակաուղղվածության այլ ոչ թե պատահական ու խառնաշփոթային փորձերի իրականացումը:

Այս ձևի մտածողության առանձնահատկությունները արդյունք են նրա, որ վերջինիս օգնությամբ լուծվում են խնդիրներ, որտեղ առարկաները կարելի է վերցնել ձեռքով, որպեսզի փոխել նրանց վիճակը և հատկությունները, ինչպես նաև դասավորել տարածության մեջ: Քանի որ աշխատելով առարկաների հետ երեխային հեշտ է հետևել իր գործողություններին կապված դրանց փոփոխության հետ, ապա այս դեպքում հեշտ է նաև կառավարել այդ գործողությունները, դադարեցնել պրակտիկ փորձերը, եթե դրանց արդյունքը չի համապատասխանում խնդրի պահանջներին, կամ էլ հակառակը ստիպել ինքն իրեն փորձը հասցնել ավարտին, մինչև որոշակի արդյունքի հասնելը, այլ ոչ թե թողնել դրա կատարումը չիմանալով դրանց արդյունքները:²¹

Եվ այսպես, դիտագործնական մտածողության օգնությամբ հարմար է զարգացնել երեխաների մոտ մտքի այնպիսի որակներ, ինչպիսին է խնդրի լուծման ժամանակ նպատակաուղղվածությունը, գիտակցաբար կառավարելու և իրենց գործողությունները վերահսկելու ունակությունը: Դիտագործնական մտածողության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանց օգնությամբ խնդիրների լուծումը, երեխաները հնարավորություն չեն ունենում իրապես փոխել կերպարներն ու պատկերացումները: Դա թույլ է տալիս մշակելու տարբեր պլաններ նպատակին հասնելու համար, մտովի համաձայնեցնել այդ պլանները, որպեսզի գտնեն լավագույն տարբերակը: Քանի որ դիտագործնական մտածողության միջոցով խնդիրների լուծման ժամանակ դպրոցականները պետք է հենվեն միայն առարկաների կերպարների վրա, այսինքն՝ հիմնվել առարկաների վրա միայն մտովի, ապա այս դեպքում դժվար է կառավարել իրենց գործողությունները, վերահսկել դրանք և գիտակցել քան այն

²⁰ Степ Савченко А.Я. Развитие познавательной самостоятельности младших школьников / А.Я. Савченко. — Киев: Рад. шк., 1982. էջ 106:

²¹ Степ Пастушкова М.А. Формирование познавательных интересов младших школьников в учебной деятельности: автореф. дис. ... канд. пед. наук / М.А. Пастушкова. — М., 2009. էջ 127:

դեպքում, երբ առկա է հնարավորություն հենվելու հենց առարկաների վրա: Դրա համար դիտագործնական մտածողության զարգացման աշխատանքների նպատակը չի կարող կայանալ նրանում, որպեսզի նրա օգնությամբ ձևավորել իմացություն կառավարելու իրենց գործողությունները խնդիրների լուծման ժամանակ:

Երեխաների մոտ դիտագործնական մտածողության վերականգնման գլխավոր նպատակը նրանում է, որպեսզի նրա օգնությամբ ձևավորել իմացություն դիտարկելու տարբեր ճանապարհներ, տարբեր պլաններ, տարբեր հարավորություններ նպատակին հասնելու համար, տարբեր միջոցներ խնդիրները լուծելու համար: Այս ամենը բխում է նրանից, որ հիմնվելով առարկաներին մտային պլանով, պատկերացնելով նրանց փոփոխության հնարավոր տարբերակները, կարելի է ավելի արագ գտնել ճիշտ լուծումները, քան կատարել յուրաքանչյուր տաբերակ, որը հնարավոր է: Առավելևս, որ ոչ միշտ կա հնարավորություն իրական վիճակում բազմակի փոփոխությունների համար: Բառատրամաբանական մտածողության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այս առանձնացված մտածողության ձևը, որի ժամանակ մարդը գործում է ոչ թե իրերի հետ կամ նրանց կերպարների, այլ նրանց մասին պատկերացումների ու հասկացությունների, որոնք ձևակերպվում են բառերով կամ նշաններով: Բացի դա, մարդը գործում է համապատասխան կանոններով, շեղվելով իրի և դրանց կերպարների դիտողական առանձնահատկություններից:²²

Դրա համար երեխաների մոտ բառատրամաբանական մտածողության զարգացման աշխատանքի նպատակը կայանում է նրանում, որպեսզի վերջինիս օգնությամբ երեխաների մոտ ձևավորել տրամաբանելու ունակությունը, եզրահանգումներ կատարել այդ դատողություններից, որոնք առաջարկվում են որպես ելակետային, ձևավորել ունակություն սահմանափակվելու այդ դատողությունների բովանդակությամբ և չընդգրկել այլ նկատառումներ, որոնք կապված են այն իրերի կամ կերպարների արտաքին առանձնահատկությունների հետ, որոնք արտացոլվում և կարևորվում են այդ ելակետային դատողություններում:

Այսպիսով՝ ի մի բերելով վերը շարադրվածը կարող ենք ասել, որ կրտսեր դպրոցականի մտածողությունը իրականացվում է երեք ձևի միջոցներով՝ դիտագործնական, դիտակերպարային և բառատրամաբանական: Նույն տարիքի երեխաների մոտ մտածողության մակարդակը բավականին տարբեր է: Դրա համար մանկավարժների խնդիրն է դիֆերենցված մոտեցում ցուցաբերել կրտսեր դպրոցականների մտավոր զարգացման խթանմանը:

²² Стен Жалдак, Н.Н. Развитие логичности мышления у младших школьников [Текст] / Н.Н. Жалдак // Нач. шк. - 2000. - №7. С. 77-82:

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/, ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար, ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլ:²³

Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է:

²³ Стеу Выготский Л.С. “Мышление и речь” - М: Лабиринт 1996 г. Էջ 139:

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

- իմացական ոլորտի զարգացում
- աֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով;
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:

Այսպես՝ կրտսեր դպրոցականի մտավոր զարգացումը և ինտելեկտուալ դրսևորումները պայմանավորված են մի շարք գործառույթներով, որոնք ընդհանրացվում են իմացական գործընթացներով՝ հիշողություն, ուշադրություն, ընկալում, մաթեմատիկական ունակություններ, մտածողություն և ստեղծարարություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր» Երևան: Լույս, 1983թ., 456 էջ:
2. Թուրունջյան Ի.Ս., «Կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունները» Երևան 1962թ., 215 էջ:
3. Պետրոսյան Ա.Վ., Ընդհանուր հոգեբանություն, Երևան, 1974թ., 542 էջ:
4. Выготский Л.С., “Мышление и речь” - М: Лабиринт 1996 г., 368с.
5. Гинзбург М.Р., Развитие мотивов учения у детей 6-7 лет. Особенности психического развития детей 6-7 летнего возраста // [ред. Д.Б. Эльконин]. - М., 2007г., 233 с.
6. Зимняя И.А., Педагогическая психология. Учебник для вузов. Издание второе, дополненное и переработанное. – М.: Издательская корпорация Логос, 1999г., 384 с.
7. Купарадзе Н., Педагогические условия развития умений критически мыслить у учащихся начальных классов [Текст] / Н. Купарадзе // Нач. шк. – 2004г. - №8. 95 с.
8. Немов Р.С., Психология. Т.1, М. 2007г., 105 с.
9. Немов Р.С., Психология, Т.2, М. 2007г., 123 с..
10. Обухова Л.Ф., “Детская психология: теория, факты, проблемы, - М: Тривола, 1995г., 352 с.
11. Пастушкова М.А., Формирование познавательных интересов младших школьников в учебной деятельности : автореф. дис. ... канд. пед. наук / М.А. Пастушкова. - М., 2009г., 170 с.
12. “Практическая психология образования” под ред. Дубровиной И., М., ТЦ «Сфера», 1997г., 319 с.
13. Савченко А.Я., Развитие познавательной самостоятельности младших школьников Киев: Рад. шк., 1982 г., 656 с.
14. Эльконин Д.Б., “Избранные психологические труды. Проблемы возрастной и педагогической психологии” П.ред. Д.И. Фельдштейна - М: Международная педагогическая академия, 1995 г., 224 с.